600.0167.15.06.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

15 հունիսի 2016 թվականի № 167Ա

ք. Երևան

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի №158Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 8-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագնի հաշվարկման մեթոդիկան՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի նոյեմբերի 4-ի «էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագնի հաշվարկման մեթոդաբանությունը հաստատելու մասին» №158Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ **Շ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

ք. Երևան

15 հունիսի 2016թ"

ժամը 16^{00}

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 15-ի
№167Ա որոշմամբ

ՄԵԹՈԴԻԿԱ

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

1. Սույն մեթոդիկան սահմանում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Լիցենզավորված անձ) կողմից էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) մատուցման սակագների հաշվարկման կարգը:

2. Ծառայության մատուցման սակագնի հաշվարկման հիմքում դրվում է անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքը, համաձայն որի անհրաժեշտ հասույթը պետք է բավարարի Լիցենզավորված անձի հուսալի, անվտանգ և շարունակական գործունեության համար անհրաժեշտ ու հիմնավորված շահագործման և պահպանման ծախսերի իրականացմանը, հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի փոխհատուցմանը և ներգրավված կապիտալի դիմաց թույլատրելի (ողջամիտ) շահույթի ստացման ապահովմանը: Անհրաժեշտ հասույթը **(ԱՀ)** հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԱՀ = ՇՊԾ + Մ + ԹՇ + ՖԾ - ԱԵ ,$$

որտեղ՝

ՇՊԾ-ն Ծառայության մատուցման համար անհրաժեշտ շահագործման և պահպանման ծախսերի մեծությունն է,

Մ-ն Ծառայության մատուցման համար օգտակար և օգտագործվող հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի արժեքն է,

ԹՇ-ն Ծառայության մատուցման համար օգտակար և օգտագործվող զուտ ակտիվների դիմաց թույլատրելի շահույթի մեծությունն է,

ՖԾ-ն Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական ծախսերն են,

ԱԵ-ն այլ եկամուտն է:

3. Շահագործման և պահպանման ծախսերում (ՇՊԾ) ներառվում են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից թույլատրված 12-ամսյա ժամանակաշրջանի (այսուհետ՝ հաշվարկային տարի) ընթացքում կատարվող ընթացիկ ծախսերը, որոնք հիմնավորված և անհրաժեշտ են Լիցենզավորված անձի բնականոն գործունեությունն ապահովելու համար, այդ թվում՝

1) նորոգման ծախսերը,

2) նյութական ծախսերը,

3) աշխատանքի վճարման ծախսերը,

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկերը (բացի շահութահարկից և ավելացված արժեքի հարկից), տուրքերը ու պարտադիր այլ վճարները,

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսերը:

Շահագործման և պահպանման ծախսերը որոշվում են ֆինանսական հաշվետվություններով ներկայացված փաստացի ծախսերի վերլուծության հիման վրա՝ հաշվի առնելով դրանց որոշման պահին հայտնի և կանխատեսվող ողջամիտ փոփոխությունները: Ծախսերում չեն ընդգրկվում լիցենզավորված գործունեության հետ չառնչվող ծախսերը, որոնց համար Լիցենզավորված անձն իրականացնում է առանձնացված հաշվառում:

4. Հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի արժեքը (Մ) հաշվարկվում է գծային եղանակով՝ ելնելով Ծառայության մատուցման համար Հանձնաժողովի կողմից օգտակար և օգտագործվող ճանաչված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սկզբնական (ձեռքբերման) արժեքից և օգտակար ծառայության ժամանակահատվածից: Հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվարկում չեն ընդգրկվում Հայաստանի Հանրապետության կառավարությունից կամ Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի և դրամաշնորհների հաշվին ստեղծված ակտիվները:

5. Թույլատրելի շահույթը (ԹՇ) որոշվում է հետևյալ բանաձևով՝

ԹՇ = ՇԲ * ՇՆ/100,

որտեղ՝

ՇԲ-ն շահույթի հաշվարկման բազան է,

ՇՆ-ն ակտիվների շահութաբերության նորման է մինչև հարկումը:

6. Շահույթի հաշվարկման բազան որոշվում է հետևյալ բանաձևով՝

ՇԲ = ՆԱ - ԿՄ + ՇԿ,

որտեղ՝

ՆԱ-ն Ծառայության սակագների վերանայման տարվան նախորդող տարիներին սահմանված կարգով Հանձնաժողովի հետ համաձայնեցված

ներդրումների հաշվին ստեղծված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեքն է,

ԿՄ-ն հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների կուտակված մաշվածությունն ու ամորտիզացիան է, որը հաշվարկվում է սույն մեթոդիկայի 4-րդ կետով սահմանված սկզբունքով,

ՇԿ-ն շրջանառու կապիտալի մեծությունն է:

Շահույթի հաշվարկման բազայում չեն ընդգրկվում Հայաստանի Հանրապետության կառավարությունից կամ Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի և դրամաշնորհների հաշվին ստեղծված ակտիվները:

7. Շրջանառու կապիտալի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

ՇԿ = ՇՊԾ * 30 / 365:

8. Շահույթի հաշվարկման բազան ժամանակ առ ժամանակ (բայց ոչ հաճախ, քան տարին մեկ անգամ) վերահաշվարկվում է հաշվի առնելու համար՝

1) օգտակար և օգտագործվող ճանաչված ակտիվներում կատարված ներդրումները,

2) կուտակված մաշվածության (ամորտիզացիայի) փոփոխությունը,

3) շրջանառու կապիտալի թույլատրված մեծության փոփոխությունը:

9. Հանձնաժողովն ակտիվների շահութաբերության նորման սահմանում է՝ ելնելով Հայաստանի Հանրապետությունում ռիսկի նույն մակարդակով գործող ընկերությունների շահութաբերության վերլուծությունից, բայց ոչ պակաս, քան 8 տոկոսը (հարկումից հետո):

10. Անհրաժեշտ ֆինանսական ծախսերը (ՖԾ) Հայաստանի Հանրապետության կառավարությունից կամ Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի հաշվին

իրականացվող ծրագրերի շրջանակում ստեղծվող ակտիվների ֆինանսավորմանն ուղղված ծախսերն են՝ Հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված փոխառու միջոցների սպասարկման (տոկոսավճարներ) և մարման ծախսերը, որոնք որոշվում են Լիցենզավորված անձի առկա պարտքերի սպասարկման և մարման ժամանակացույցից:

11. Այլ եկամուտը (ԱԵ) ներառում է՝

1) էլեկտրական էներգիայի սպառողների կողմից իրենց սպառման համար անմիջապես արտադրողից կամ ներկրողից էլեկտրական էներգիայի գնման և ներկրման ժամանակ, համաձայն շուկայի կանոնների, սպառողներին Ծառայության մատուցումից ստացված հասույթը՝ հաշվարկային տարվան նախորդող այն 12 ամիսների ընթացում, որոնց վերաբերյալ առկա են փաստացի տվյալներ,

2) Ծառայության մատուցման համար ներգրավված ակտիվների այլ նպատակներով օգտագործումից (օտարումից) ստացվող լրացուցիչ հասույթների և դրանց պատճառով առաջացող լրացուցիչ ծախսերի տարբերությունը,

3) Հայաստանի Հանրապետության տարածքով էլեկտրական էներգիայի տարանցիկ փոխադրման ծառայությունից ստացվող հասույթը՝ սույն մեթոդիկայի 14-րդ կետի կիրառման դեպքում:

12. Լիցենզավորված անձի համար, էլեկտրաէներգետիկական համակարգին մատուցվող ծառայության հաշվառման հնարավորություններից և նպատակահարմարությունից ելնելով, կիրառվում են միադրույք սակագներ:

13. Ծառայության սակագինը (U) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$U = \frac{ԱՀ}{W_Ն + W_ա},$$

որտեղ՝

$W_{Ն}$-ն հաշվարկային տարում ներքին սպառման համար հաղորդվող էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի էլեկտրական էներգիայի քանակն է,

$W_{Ա}$-ն հաշվարկային տարում արտահանվող (տարանցիկ փոխադրվող) էլեկտրական էներգիայի քանակն է:

$W_{Ն}$ և $W_{Ա}$ մեծությունները որոշվում են իրավասու մարմնի կողմից հաստատված էլեկտրական էներգիայի հաշվեկշռի կազմման կարգի պահանջներին համապատասխան «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կազմած և Հանձնաժողով ներկայացրած էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ներկրման և արտահանման (տարանցիկ փոխադրման) հաշվեկշռի հիման վրա:

14. Հայաստանի Հանրապետության տարածքով էլեկտրական էներգիայի տարանցիկ փոխադրման երկարաժամկետ պայմանագրերի առկայության դեպքում Հանձնաժողովը էլեկտրական էներգիայի տարանցիկ փոխադրման մասով մատուցվող Ծառայության համար կարող է սահմանել առանձին սակագին: Այդ դեպքում սույն մեթոդիկայի 13-րդ կետում նշված $W_{Ա}$ մեծությունը որոշելիս հաշվի չեն առնվում էլեկտրական էներգիայի տարանցիկ փոխադրման ծավալները: